

ԿՈՆՆՈՏԱՑԻԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ

Կոննոտացիան (հարանշանակություն, հարիմաստություն) բառի լրացուցիչ, հարակից իմաստն է, արտալեզվական ինֆորմացիա, որ սերտորեն կապված է տվյալ լեզվով խոսող հանրության մշակույթի, աշխարհընկալման, պատկերացումների, լեզվական ավանդույթի հետ: Հատկապես վերջին տասնամյակներում խիստ մեծացել է կոննոտացիայի հանդեպ հետաքրքրությունը. դրա մասին են վկայում տարբեր լեզուներով բազմաթիվ գիտական հոդվածները, ուսումնասիրությունները, ատենախոսությունները¹: Չնայած դրան՝ մինչ օրս էլ գիտնականների շրջանում չկա միասնական տեսակետ կոննոտացիայի վերաբերյալ. տարբեր են սահմանումները, ընկալումները:

«Լեզվաբանական տերմինների բառարան-տեղեկատուն» հարանշանակությունը սահմանում է իբրև «այն լրացուցիչ իմաստային կամ ոճական նրբերանգները, որ դրվում են բառի հիմնական նշանակության վրա և ծառայում հուզարտահայտչական երանգավորման համար»²: Օ. Ախմանովան տալիս է հետևյալ սահմանումը. «Կոննոտացիան (լրացուցիչ իմաստ, նրբերանգ, գունավորում) բառի կամ արտահայտության լրացուցիչ բովանդակությունն է, նրա հարակից իմաստային կամ ոճական նրբերանգները, որոնք դրվում են բառի հիմնական իմաստի վրա և ծառայում իբրև զանազան հուզական-արտահայտչական ու գնահատողական վերաբերմունք արտահայտելու միջոց»³:

Լ. Բարխուդարովը կոննոտացիա՝ հարակից իմաստ ասելով նկատի ունի այն լրացուցիչ զուգորդությունները (ասոցիացիա), որ բառն առաջացնում է լեզվակիրների գիտակցության մեջ: Նա հարակից ի-

¹ St' u, օրինակ, **Телия В. Н.** Коннотативный аспект семантики номинативных единиц. М., 1986, **Апресян Ю. Д.** Избранные труды, т. 2. Интегральное описание языка и системная лексикография. М., 1995, **Тер-Минасова С.** Война и мир языков и культур. М., 2008, **Умберто Эко**, От древа к лабиринту. М., 2016, էջ 333-367, **Eugene Albert Nida, Charles Russell Taber.** The Theory and Practice of Translation. 4 Impression, 2003, ch. 5, 91-99, **Кропотова Л. В.** История развития лексической коннотации. Язык и культура. ТГУ., 2010, 1 (9), էջ 33-47, **Ревзина О. Г.** О понятии коннотации. Сб. научных статей к 80-летию профессора К. В. Горшковой. М.: Изд-во МГУ, 2001, էջ 436-446, **Ковенева О. В.** Таинственный мир коннотации в лингвистике и теории перевода. ВМУ, сер. 22, Теория перевода, 2008, № 1, էջ 109-143:

² **Розенталь Д. Э. Теленкова М. А.** Словарь-справочник лингвистических терминов. М., 1976.

³ **Ахманова О. С.** Словарь лингвистических терминов. 1-е изд. 1966.

մաստը չի համարում բառի իմաստային կառուցվածքի բաղադրիչ⁴, իսկ փոխաբերական իմաստներն ու ոճական նրբերանգները դիտարկում է պրագմատիկ (գործաբանական) իմաստների մեջ:

Ըստ Յու. Ապրեսյանի՝ հարիմաստությունը գործաբանական տեղեկության տեսակ է, որն արտացոլում է ոչ թե շրջապատող իրականության առարկաներ ու երևույթներ, այլ դրանց նկատմամբ վերաբերմունքը: Հարակից իմաստները արձանագրում են բառի հետ կապված մշակութային պատկերացումները, ավանդույթները և բազում այլ արտալեզվական գործոններ. դրանք անմիջականորեն չեն մտնում բառի իմաստաբանական կառուցվածքի մեջ⁵:

Ս. Տեր-Մինասովան տարբերում է *ոճական* և *սոցիոմշակութային* կոննոտացիա: Ոճական կոննոտացիա ասելով 56նա նկատի ունի բառի՝ այս կամ այն ոճական շերտին պատկանելը կամ բառի արտահայտած վերաբերմունքը (դրական, բացասական, չեզոք): Իսկ սոցիոմշակութային կոննոտացիան բառի այն լրացուցիչ, հարակից իմաստներն են, նրբերանգները, որոնք պայմանավորված են մշակութային առանձնահատկություններով⁶:

Ըստ Վ. Տելիայի՝ կոննոտացիան լեզվական միավորի հուզական-գնահատողական կամ ոճական երանգավորումն է, որ կարող է լինել սովորական՝ տվյալ լեզվի համակարգում հաստատված, ընդունված (узуальный) կամ դիպվածային (оказиональный): Լայն իմաստով՝ ցանկացած բաղադրիչ, որը լրացնում է լեզվական միավորի դենոտատիվ, ինչպես նաև քերականական բովանդակությունը և տալիս նրան հուզարտահայտչական գործառույթ, կոննոտացիա է: Կոննոտացիան հարաբերակցվում է լեզվակիրների կենսափորձի, մշակութային-ազգային գիտելիքների, աշխարհընկալման հետ և արտացոլում նրանց ռացիոնալ կամ հուզական վերաբերմունքը նշանակյալի նկատմամբ⁷:

«Կոննոտացիան բնորոշ է լեզվական միավորին, մտնում է հենց այդ միավորի մեջ, գտնվում է նրա սահմանների ներսում, լրացնում է նրան, իսկ ասոցիացիաները չեն լրացնում լեզվական միավորին, նրա սահմաններում չեն գտնվում, վերագրվում են նրան լեզվական հանրության կողմից»⁸, - գրում է Դ. Գուդկովը:

Ե. Ստորոժևան ընդլայնում է կոննոտացիայի սահմանները՝ հա-

⁴ Տե՛ս **Бархударов Л.**, Язык и перевод. М., 1975, էջ 123-124:

⁵ Տե՛ս **Апресян Ю. Д.** Коннотация как часть прагматики слова. – В кн.: Ю. Д. Апресян. Избранные труды, т. 2. Интегральное описание языка и системная лексикография. М., 1995, էջ 150-159:

⁶ Տե՛ս **Тер-Минасова С.** Война и мир языков и культур. М., 2008.

⁷ Տե՛ս «Лингвистический энциклопедический словарь». Коннотация (автор статьи Вероника Телия). /Под. ред. В. Н. Ярцевой. М., 1990 (էլեկտրոնային տարբերակը՝ <http://lingvisticheskiy-slovar.ru/>):

⁸ **Гудков Д. Б.** Единицы кодов культуры: проблемы семантики. Язык, сознание, коммуникация. № 26, МГУ, 2004, էջ 46:

րակից իմաստները բաժանելով երկու մեծ խմբի՝ ներլեզվական և արտալեզվական, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են մի քանի ենթախմբի: Ներլեզվականի մեջ նա ընդգրկում է համաժամանակյա և տարաժամանակյա բաղադրիչները, իսկ արտալեզվականի մեջ՝ գործառական-ոճական, սոցիալական, հոգեբանական և ազգային-մշակութային բաղադրիչները: Նա նկատում է նաև, որ այս բաղադրիչներից ոչ բոլորի մասին նշում կա բառարաններում⁹:

Մենք ևս հակված ենք այն տեսակետին, որ զուգորդումները, խորհրդանշական իմաստները բառի իմաստային կառուցվածքի բաղադրիչ չեն. հաճախ հնարավոր չէ դրանք ամբողջությամբ ընդգրկել ո՛չ բացատրական, ո՛չ թարգմանական բառարաններում*: Սակայն հատկապես թարգմանության ժամանակ այդ արտալեզվական տեղեկույթը կարևորագույն դեր է խաղում. կոննոտատիվ իմաստները, զուգորդումները յուրաքանչյուր լեզվի համար առանձնահատուկ են (սպեցիֆիկ), ինչն էլ դժվարություններ է առաջացնում մի լեզվից մյուսը թարգմանելիս:

Նույն ռեֆերենցիալ (դենոտատիվ) իմաստն ունեցող բառերը՝ հոմանիշները, թե՛ մի լեզվում, թե՛ տարբեր լեզուներում հաճախ տարբերվում են կոննոտատիվ՝ հարակից իմաստներով. ունենալով նույն կամ մոտ իմաստներ՝ դրանք կարող են արտահայտել տարբեր վերաբերմունք, պատկանել տարբեր ոճական շերտերի. օր.՝ *ստիկան* (չեզոք) և *միլիցա*, *մենթ* (ժարգոն., արհմ.) կամ *полицейский* (չեզոք), *мент* (ժարգոն., արհմ.), *мысop* (գոհ., արհմ.), *policman* (չեզոք), *cop* (սլենգ), *bull* (սլենգ): Հարակից իմաստները հաշվի առնելը կարևոր է խոսքը ճիշտ կառուցելու, ինչպես նաև համարժեք թարգմանություն անելու համար:

Օրինակ՝ Նարինե Աբգարյանի վիպակի վերնագիրը՝ «Понаяхавшая», բավականին դժվար է թարգմանել հայերեն: «*Понаяхатъ*» բառը ռուսերենում բացասական, հեզնական-ծաղրական կոննոտացիա ունի, «*понаехавшие*» են կոչում գավառական քաղաքներից, փոքրիկ բնակավայրերից, նաև այլ պակաս բարեկեցիկ երկրներից ռուսական մեծ քաղաքներ տեղափոխվածներին: Մրա համար հայերենում ունենք նույն կամ մոտ ռեֆերենցիալ իմաստով *օտար*, *օտարական*, *էկվոր* հոմանիշներ, խոսակցականում *ախպար* (առավելապես գործածական էր խորհրդային տարիներին), իսկ Ղարաբաղի բարբառում՝ «*գյալմա*» բառը (օտարական, այլ տեղից եկած), սակայն նշված բառերից և ոչ մեկը ճիշտ համարժեք չէ: *Օտարականի*, *էկվորի* մեջ չկա հեզնական, քամահրական վերաբերմունք, *ախպարը* հստակ կապվում է խորհրդային ժամանակների և սփյուռքահայերի հետ, իսկ *գյալման* զուգորդվում է Ղարաբաղի հետ: Այսինքն՝ անգամ մոտ կոննո-

⁹ Տե՛ս **Сторожева Е. М.** Коннотация и ее структура. Вестник ЧелГУ, 2007, № 13, էջ 113-118:

* Տարբեր լեզուներով գոյություն ունեն ասոցիացիաների և խորհրդանիշների հատուկ բառարաններ, այդ թվում և անցանց. օր.՝ «Русский ассоциативный словарь». Ред. Ю. Караулов. 1-е изд. 1994, Русский ассоциативный тазарус (<http://thesaurus.ru/dict>), անգլերեն՝ <https://visuwords.com/>, բազմալեզու՝ <https://wordassociations.net/en/> ևն:

տատիվ իմաստով բառ ունենալու դեպքում էլ կարող են ասոցիացիաները խիստ տարբեր լինել:

Հարակից փոխաբերական իմաստներ ունեն մի շարք կենդանա-նուններ, բուսանուններ, մարմնի մասերի անվանումներ (ինչպես, օրինակ, *հավը* հիմնական իմաստից բացի, հայերենում ունի փխբ. *1. միամիտ, 2. մոռացկոտ, 3. խեղճուկրակ* իմաստներ, լորին բուսանուն լինելուց գատ, նաև նշանակում է փխբ. *անճարակ մարդ*): Սա ևս դժվարացնում է թարգմանչի գործը, քանի որ հաճախ նույն ռեֆերենցիալ իմաստով բառի հարակից իմաստը թարգմանության լեզվում այլ բառով է արտահայտվում: Այսպիսի դեպքերում բառարանային համարժեքը չի կարող իսկապես համարժեք թարգմանություն ապահովել: Օրինակ *жеребей* բառի բառարանային համարժեքը *արու ձի, հովատակ, երիվարն* է, սակայն *жеребей*-ը ռուսերենում ունի հարակից այլ իմաստ. այդպես են անվանում առողջ, սեռական ակտիվ կյանքով ապրող տղամարդուն (խսկ., հսրկ.): Հայերենում *ձի* բառի ոչ մի հոմանիշ չունի այս հարակից իմաստը, և թարգմանիչն այլ միջոցներով պետք է հասնի համարժեքության: Նույն կերպ ռուսերեն *козел*-ը՝ իբրև կենդանու անվանում, հայերենում ունի *այծ, նոխազ* համարժեքներ, սակայն բառի լրացուցիչ իմաստը (այն է՝ *տհաճ, զզվելի մարդ*. վիրավորական արտահայտություն է տղամարդկանց հասցեին) հայերեն հնարավոր չէ թարգմանել բառարանային համարժեքներով. այդ իմաստով հայերենում գործածում ենք տարբեր բառեր, կախված համատեքստից՝ *անասուն, տավար, եզ, ոչխար* ևն:

Հարակից իմաստների առաջացումը պայմանավորված է մշակութային, քաղաքական, պատմական, սոցիալական, կրոնական, հոգեբանական և այլ գործոններով ու հանգամանքներով: Օրինակ՝ *թուրք* էթնոնիմը պատմական հանգամանքների բերումով հայերենում ձև է բերել հարակից «*դաժան, արյունարբու, թշնամի*» իմաստ, որ կարող է բացակայել այլ լեզուներում: Կոննոտացիայի առաջացման պատճառով կարող են լինել լեզվական տարուները՝ այս կամ այն բառի, արտահայտության գործածության արգելքը: Տարուների հետ է առնչվում մեղմասությունը. արգելված կամ անհարմար համարվող բառերը, արտահայտությունները փոխարինվում են ավելի մեղմ կամ չեզոք տարբերակներով: Նման բազմաթիվ օրինակներ ունենք նաև խոսակցական հայերենում, բարբառներում: Սեռական օրգանների համար գրական հոմանիշների կողքին ունենք թե՛ գոեհիկ, հայիոյական բառեր, թե՛ մեղմասություններ, հատկապես երբ խոսքը երեխաների մասին է. օրինակ՝ տղա երեխայի սեռական օրգանի համար՝ *փշատ*, աղջիկ երեխայի համար՝ *թուզ, դեղձ* ևն¹⁰: Եվ մեծ մասամբ այս կարգի բառերի ռեֆերենցիալ (դենոտատիվ) ու կոննոտատիվ իմաստները այլ լեզուներ

¹⁰ Տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», ԳԱԱ, Եր., 2004, Մտ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944 ևն:

րում տարբեր բառերով են արտահայտվում. օր.՝ թուրք - *инжир*, *фига*, որոնցից միայն *фига*-ն ունի փոխաբերական իմաստ, այն է՝ 1. *երեք մատով հայհոյանշան*, 2. *ոչինչ, ոչ մի բան (հարկ.)*, իսկ «աղջկա/կնոջ սեռական օրգան (մեղմ.)» իմաստ ունի *инжир*, ոչ *фига* բառերը չունեն:

Ժամանակի ընթացքում բառերի կոննոտատիվ իմաստները կարող են փոփոխվել: *Ղեբիլ*, *իմբեցիլ*, *իդիոտ* բառերը մինչև 1950-ականները բժշկական տերմիններ էին, սակայն վերջին տասնամյակներում դրանք ընդգծված բացասական, արհամարհական կոննոտացիա են ստացել, այդ պատճառով դադարել են բժշկական գրականության մեջ գործածվելուց և փոխարինվել չեզոք տերմիններով: Մեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքն այսօր քաղաքակիրթ աշխարհում ընկալվում է իբրև խիստ բացասական երևույթ, ինչն անդրադառնում է նաև լեզվի վրա: Օրինակ՝ դեռ գրաբարից ունենք *արուագէտ*, *արուամոլ*, *արուապիդ* բառերը, որոնք ակնհայտ բացասական կոննոտացիա ունեն: Այսօր գիտական գրականության մեջ, պաշտոնական ոճում գործածվում են *նույնասեռական* կամ *միասեռական* տերմինները: Ի տարբերություն *արվագէտ*, *արվամոլ*, *արվապիդ*, նաև խոսակցականում և բարբառներում հանդիպող վիրավորական-արհամարհական *գեյ*, *գոմիկ*, *գ*ոթ* և այլ հումանիշների *նույնասեռականը* չեզոք կոննոտացիա ունի: Առհասարակ վերջին տասնամյակներում պոլիտկոռեկտությունը բավականին խնդիրներ է առաջացնում բժշկության բնագավառում, երբ տարբեր հիվանդությունների գիտական անվանումները համարվում են կոպիտ կամ վիրավորական և փոխարինվում այլ տարբերակներով: Օրինակ՝ Դաունի համախտանիշը այդպես է կոչվում բժիշկ Ջոն Դաունի անունով (John Down), սակայն վերջին տասնամյակներում *դաուն* բառը վիրավորական, ծաղրական իմաստ է ստացել, և բացառված չէ, որ մոտ ապագայում այն ևս փոխարինվի: Գեղարվեստական գրականությունը, արվեստն առհասարակ ևս անմասն չեն մնացել պոլիտկոռեկտությունից. ամենահայտնի օրինակներից է Ագատա Քրիստիի վեպը՝ “*Ten little niggers*” («10 փոքրիկ նեգրեր»), որն անգլախոս երկրներում լույս է տեսնում “*And Then There Were None*” («Եվ այնտեղ ոչ ոք չկար») վերնագրով, քանի որ *nigger*-ը վիրավորում է սևամորթներին:

Թարգմանիչը պիտի հաշվի առնի բազմաթիվ արտալեզվական գործոններ՝ սկսած ժամանակաշրջանից ու լեզվական ավանդույթից մինչև թարգմանության լեզվով խոսող հանրության մշակութային առանձնահատկություններն ու մտածելակերպը: Օրինակ խորհրդային տարիներին լույս տեսած թարգմանական գրականության մեջ, հայերեն թարգմանված ֆիլմերում, մասամբ նաև այսօր, ընդունված է գոեհկաբանությունները մեղմասություններով փոխարինելը: Թեև բանավոր խոսքում՝ խոսակցականում, բարբառներում ունենք բազմաթիվ գոեհկաբանություններ ու հայհոյական բառեր, սակայն հատկապես գրավոր, նաև էկրանից հնչող խոսքում ընդունված չէ հայհոյանքը. մեր

հասարակության վերաբերմունքը ընդգծված բացասական է: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված գոեհկաբանությունները մեղմասություններով փոխարինելու ավանդույթը, այդ թվում և թարգմանական գործերում:

Բերենք մի քանի օրինակ Յարոսլավ Հաշեկի «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները համաշխարհային պատերազմի ժամանակ» ռուսերեն և հայերեն թարգմանություններից (հայերենը թարգմանվել է ոչ թե բնագրից, այլ միջնորդ ռուսերենից): Չեխերեն բնագրում բավականին շատ են գոեհիկ, ցածր ոճի բառերը. Հաշեկը գիրքն առաջին անգամ սեփական միջոցներով է տպագրել, քանի որ հրատարակիչները մերժել են այն տպել հենց գոեհկաբանությունների պատճառով:

"Já se do takových věci nepletu, s tím ať mně každé políbi *prdel*, odpovéděl slušně pan Palivec.¹¹ (*prdel* - քամակ, n* (գոհկ.)):

Ռուսերեն թարգմանության մեջ բնագրի որոշ մասեր գրաքննություն են անցել, խիստ կոպիտ, գոեհիկ բառերը փոխարինվել են ավելի մեղմ տարբերակներով.

-Я в такие дела не лезу. Ну *их всех в задницу* с такими делами!- вежливо ответил пан Паливец¹².

Իսկ հայերեն թարգմանության մեջ գոեհիկ բառերը փոխարինված են գրական կամ չեզոք հոմանիշներով, թեև ունենք համարժեքներ.

««Ես այդպիսի գործերի չեմ խառնվում: *Թող հետույքս մտնեն* նրանք բոլորն իրենց այդ գործերով»,– քաղաքավարի պատասխանեց Պալիվեցը»¹³:

Կամ «Palivec byl známý sprosták, každé jeho druhé slovo byla *zadnice* nebo *hovno*».

«Каждое второе слово у него было "*задница*" или "*дерьмо*"».

«Պալիվեցը երևելի գոեհկախոս էր: Նրա յուրաքանչյուր երկրորդ բառը կամ «*հետույք*»-ն էր կամ «*կղանք*»-ը»:

Ինչպես արդեն նշեցինք, կոննոտատիվ իմաստները կարող են ժամանակի հետ փոխվել: Օրինակ՝ Քուչակի հայրեններում հանդիպող *ծծերը* այսօր գոեհիկ կոննոտացիա է ստացել, թեև ակնհայտ է, որ Քուչակի ժամանակ բառը այդպես չի ընկալվել: Հայրենների ռուսերեն տարբեր թարգմանությունների մեջ (որոնք արվել են 20-րդ դարում) ընտրված է ոչ թե *сиськи* հասարակաբանությունը, այլ չեզոք *грудь* կամ *грудь* (կուրծք/կրծքեր), երբեմն՝ *соски* տարբերակը (ինչը համատեքստում միանգամայն արդարացված է):

Քո *догол* է ճերմակ տաճար, /քո *ծրծերդ* է կանթեղ ի վառ..

Подобно храму *грудь* твоя, /лампады в нем твои *соски*..

(թարգմ.՝ Վ. Միկուշևիչ)

¹¹ Մեջբերումն ըստ՝ <http://lingvo.asu.ru/polish/shvejik/00index.html> կայքի:

¹² Մեջբերումն ըստ՝ <http://lingvo.asu.ru/polish/shvejik/00index.html> կայքի:

¹³ Մեջբերումն ըստ՝ Յ. Հաշեկ, Քաջարի զինվոր Շվեյկի արկածները համաշխարհային պատերազմի ժամանակ: Թարգմ. ռուս.-ից՝ Սուրեն Վահունի, Եր., 1973:

Թուխ աչք և ունքեր ունիս, /լայն ճակատ ու կարմիր երես:
Այդ ճերմակդ որ դուն ունիս, /ըզշամամ ծրծերդ որ ի ներս...
Черноброва ты, тонкостанна, /лоб высокий, лицо румяно.
Белизну ты внутри несешь, /грудь твоя словно два шамама...

(թարգմ.՝ Նաում Գրեբնև)

Այստեղ հիշենք, որ հայ ժողովրդական երգերի, հայրենների մեջ տարածված պատկեր է դեռատի աղջկա կուրծքը շամամի հետ համեմատելը, և բառարաններում շամամի երկրորդ իմաստը հենց կուրծքն է (երիտասարդ աղջկա): Բառի բացարձակ համարժեքը գոյություն չունի ռուսերենում, և թարգմանության մեջ պարզապես տառադարձում է՝ *шамамы*: «Շամամը» տառադարձված է նաև Վ. Բրյուսովի թարգմանության մեջ.

Твоих грудей шамамы я вкушу ль, царица меж цариц?

որտեղ *вкусить՝ համտեսել, ճաշակել* բառից հասկանալի է, որ դա ուտելիք է, սակայն ռուս ընթերցողի համար այս պատկերը մնում է օտար, անհասկանալի է առանց ծանոթագրության: Հայտնի է, որ մշակութային տարբերություններն անհամեմատ դժվար է թարգմանելը, և, անշուշտ, թարգմանության մեջ կորչում է բնագրի ինֆորմացիայի մի մասը, քանի որ երկու տարբեր մշակույթների կրողների խորքային (ֆոնային) գիտելիքները տարբեր են:

Հետաքրքիր է վերը բերված «Թուխ աչք և ունքեր ունիս» հայրենի անգլերեն թարգմանությունը. թեև այն տողացիների միջոցով է արված, թարգմանիչը կարողացել է միջնադարյան հայրենների պատկերները անգլալեզու ընթերցողին փոխանցել: Կարծում ենք՝ ակնհայտ է Աստվածաշնչի «Երգ երգոց»-ի, անտիկ և արևելյան պոեզիայի անգլերեն թարգմանությունների դերը որոշ պատկերներ թարգմանելիս.

Jet-black your eyes, raven your brows,
rosy your cheeks, your forehead wide.

And shimmering white your apple-breasts...¹⁴

(թարգմ.՝ Էվալդ Օսերս)

Հետաքրքիր են ընտրված *Jet-black eyes՝ սև սաթ աչքեր*, թուխ հոնքերը փոխակերպվել է *ազոսավ հոնքերի՝ raven* your brows (օր. «Երգ երգոց»-ի անգլերեն թարգմանության մեջ կա *ազոսավի պես սև (մազեր)՝ "His head [is as] the most fine gold, his locks [are] bushy, [and] black as a raven"* (Song 5.11): Շամամ ստիներին փոխարեն այլ պատկեր է՝ *your apple-breasts - խնձոր-ստիներդ*. Կնոջ կուրծքը խնձորի հետ համեմատելը տարածված պատկեր է անտիկ գրականության, մասնավորապես հունական դիցաբանության մեջ¹⁵, որին թարգմանությունների միջոցով ծանոթ է անգլիացի ընթերցողը:

¹⁴ Մեջբերումն ըստ՝ **Nahapet Kuchak**, A hundred and one hayrens. Transl. Ewald Osers. Yerevan, 1979:

¹⁵ Այս մասին տե՛ս, օրինակ, **Eros in Ancient Greece**. Oxford University press. 2013, էջ 273:

Գեղարվեստական գրականության և հատկապես պոեզիայի թարգմանության մեջ կարևոր է դառնում նաև բառի ստուգաբանական իմաստը, հնչյունական կազմը (առձայնային, բաղաձայնային): Քննենք Եղիշե Չարենցի «Ծիածան» բանաստեղծության ռուսերեն երկու թարգմանություններից երկու տող (միայն մեզ հետաքրքրող տեսանկյունից).

Լուսամփոփի՝ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՝ պես երազի. . .
Девушка, как *абажур*, голубая, с глазами мадонны
Хрупко-прозрачная, точно мечты моей тело!¹⁶

(թարգմ.՝ Ե. Նիկոլանսկայա)

Եվ՝

Девушка, как *абажур*, с глазами Богородицы
С телом призрачным, прозрачным, нереальным...¹⁷

(թարգմ.՝ Ա. Գևորգյան)

Երկու թարգմանիչն էլ ընտրել են *լուսամփոփ* բառի բառարանային համարժեքը՝ *абажур*: Այս ընտրությունը մեր կարծիքով ճիշտ չէ, քանի որ թարգմանիչները հաշվի չեն առել, որ «լուսամփոփ» բառը *լույս* և *ամփոփել* բառերից է՝ լույսը իր մեջ ամփոփող, որ բացակայում է *абажур*-ի մեջ. բառը ռուսերենում փոխառություն է ֆրանսերենից և ստուգաբանորեն թափանցիկ չէ ռուս ընթերցողի համար): Հաշվի չեն առել նաև այն, որ այս բանաստեղծության մեջ հատկապես խուլերի, շնչեղ խուլերի և ձայնորդների (*լ, փ, կ, թ, ս, ծ*) կուտակումը՝ *լուսամփոփ, թափանցիկ, աստվածամայր, կաթ, ալկաթ, հոգեթով*, կարևոր է. այն մեղմություն, հանդարտություն, մտերմիկ երանգ է հաղորդում տեքստին: Իսկ Նիկոլանսկայայի թարգմանության մեջ բնագրի հանդարտությունը, մեղմությունը մի տեսակ «ջարդվել է»՝ *ж, р, х, з, ч*-երի կուտակումով՝ *абажур, глаза, хрупкио-прозрачная, точно, мечта*: Նույնը կարող ենք ասել նաև Գևորգյանի թարգմանության մասին. *ж, з, р, ч*-երի կուտակում կա նաև այստեղ: Թերևս հնարավոր էր *абажур*-ի փոխարեն թարգմանել *светильник* կամ *лампада*: Թեև այս բառերը լուսամփոփի բառարանային համարժեքը չեն, սակայն այս բանաստեղծության համատեքստում դրանք միանգամայն ընդունելի տարբերակներ են. *светильник*-ի մեջ կա *свет*՝ *լույս* արմատը (արդեն ասել ենք, որ սա կարևոր է), իսկ *лампада*-ն (կանթեղ) եկեղեցական արարողություններում է կիրառվում, և «Աստվածամոր աչքերով» աղջկա պարագայում բնական կդիտվեր: Նաև թարգմանությունը կխուսափեր ձայնեղների և կոշտ *н*-ի (*р*) կուտակումից:

¹⁶ Մեջբերումն ըստ՝ **Чарени Е.** Стихи: Пер. с арм./Вступ. статья А. Суркова; Сост. Л. Арутюнова, А. Макинцян. — М.: Худож. лит., 1987:

¹⁷ Մեջբերումն ըստ <https://poembook.ru/poem/2423508-egishe-charents---raduga---per-ara-gevorkyana>

Կոննոտացիան, ինչպես արդեն նշել ենք, սերտ առնչություն ունի նաև խորհրդանիշների և գուգորդումների հետ: Այս ամենը խիստ կարևոր է դառնում հատկապես թարգմանությունների ժամանակ, երբ նույն դեմոստոստիվ իմաստով բառերը տարբեր լեզուներում ոչ միայն պատկանում են տարբեր ոճական շերտերի, արտահայտում տարբեր վերաբերմունք, ունեն տարբեր փոխաբերական իմաստներ, այլև խորհրդանշում են տարբեր բաներ և լեզվակիրների մեջ առաջացնում տարբեր գուգորդումներ:

Օրինակ ռուսական ֆոլկլորում խորհրդանիշ է *осина*-ն՝ կաղամախին կամ դողդոջուն բարդին: Մի կողմից այն չար ուժերի դեմ պայքարի միջոց էր, դրանից վախենում էին վիուկները, մյուս կողմից՝ այն համարվում է դժբախտություն բերող, անիծյալ ծառ: Ըստ ռուսական/սլավոնական ավանդության՝ կաղամախու տերևները վախից անդադար դողում են, քանի որ Քրիստոսին խաչել են այդ ծառի փայտից խաչի վրա. այստեղից էլ *дрожать, как осиновый лист* համեմատություն-դարձվածքը: Կաղամախին ռուսական մշակույթում անիծյալ է համարվում նաև այն պատճառով, որ Հիսուսին մատնող Հուդան զղջում է և կախվում կաղամախուց*, թեև իրականում կաղամախին Պաղեստինի տարածքում չի աճել հին ժամանակներում և հիշատակված չէ Հուդայի կախվելու մասին դրվագում**: Եսենինի «Возвращение на родину» («Վերադարձ հայրենիք») բանաստեղծության մեջ արտացոլված է կաղամախու՝ իբրև չարից պաշտպանող սրբազան ծառի մասին ֆոլկլորային, նախաքրիստոնեական պատկերացումները.

Теперь и богу негде помолиться.

Уж я хожу украдкой нынче в лес,

Молюсь осинам...

Может, пригодится...

Հայերեն թարգմանության մեջ բարդի է.

...Որտե՞ն դ աղոթես, եկ ու հասկացիր,

Ես հիմա թաքուն անտառ եմ վագում,

Բարդիներին իմ աղոթքս ասում,

Գուցե պետք կգա...(թարգմ.՝ Պ. Սևակ)

Բարդին, ինչպես գիտենք, հայերենում այլ խորհուրդ ունի և այլ գուգորդումներ. հեթանոսական ժամանակներում հայերիս մեջ եղել է բարդու պաշտամունք, այն համարվել է սրբազան ծառ: Կենաց ծառը հայ մանրանկարչության մեջ հաճախ հենց բարդի է: Բարդին, ինչպես

* Ֆյոդոր Սոլոգուբը բանաստեղծություն ունի. «Трещет робкая осина, Хотя и легок ветерок. Какая страшная причина Тревожит каждый здесь листок? Предание простого люда Так объясняет страх ветвей: На ней повесился Иуда, Христопродавец и злодей (...).

** Հայերեն թարգմանության մեջ ասվում է. «Գնաց և խեղդվեց (=կախվեց)» 27:4 եւ ասէ. Մեղայ զի մատնեցի զարիւն արդար (...) 27:5 «Եւ ընկեց զարծաթն ի տաճարին եւ զնաց, եւ չորաւ խեղդեցաւ» (Մատթ.):

և կաղնին, հայերենում խորհրդանշում է հզորություն, հավերժություն, նաև սերտորեն կապվում է հայրենի բնության, հայրենիքի հետ: Ժողովրդական երգերում, խաղիկներում պացիկ բարդու հետ է համեմատվում սիրած աղջկա/տղայի բոլը, բարակ մեջքը («*Բարակ իս, բարդու ծառ իս /Ախ, Սոնա յար, բոյիդ մեռնիս*»): Բարդին զուգորդումներ է առաջացնում նաև Մասիս սարի, Համո Սահյանի «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծության նն հետ: Այսինքն՝ *осина*-ի և բարդու կոննտացիան, զուգորդումները, սիմվոլիկան տարբեր են:

Ռուսական մշակույթում կարևոր խորհրդանիշ է նաև *рябина*-ն (հայ.՝ արոսենի, արոսի, սնձնի). այն խորհրդանշում է Ռուսիան, հայրենի տունը, նաև ընտանեկան երջանկություն, հավատարիմ սեր: Ըստ ժողովրդական ավանդության՝ արոսենին պաշտպանում է չար ուժերից. այն տնկում էին տան առջև, դրա ճյուղերով և կարմիր պտուղներով զարդարում էին հարսանեկան զգեստը: Ժողովրդական խոսքում արոսենին փաղաքշորեն անվանում են *рябинушка*: Այն զուգորդվում է աշնան գալու հետ: Ռուսաստանի տարբեր վայրերում սեպտեմբերի 23-ին նշվել է հատուկ տոն՝ «день Петра и Павла Рябинников». համարվում է, որ արոսենու պտուղները, որոնք դառնահամ են, այդ օրն են քաղցրանում¹⁸:

Եսենիին «Отговорила роша золотая...» բանաստեղծության մեջ աշնան, տխուր չվող կռունկների, անդարձ գնացած անցյալի մասին քնարական հերոսի խոհերն ուղեկցվում են արոսենու հետ զուգահեռով. արոսենու կարմիր պտուղները նման են խարույկի, որը սակայն չի ջերմացնում.

В саду горит костер рябины красной,

Но никого не может он согреть.

Բոցավառվում է կարմիր արոսի խարույկը այգում,

Սակայն ոչ ոքի չի կարողանում տաքացնել նա:

(թարգմ.՝ Հ. Սահյան)

«Я красивых таких не видел» բանաստեղծության մեջ նույնպես նման պատկեր կա. կրկնվող պատկերները ընդհանրապես հատուկ են Եսենիին պոեզիային.

Отгорела ли наша рябина,

Осыпаясь под белым окном?

Մեր արոսենու հրդեհը մարե՞ց՝

Շաղ գալով ճերմակ պատուհանի մոտ:

(թարգմ.՝ Հ. Սահյան)

Հայերենում արոսենին խորհրդանիշ չէ, դրա հետ կապված հավատալիքներ, հստակ զուգորդումներ չունենք, ինչպես ռուսերենում, այ-

¹⁸ Մարինա Ցվետանան բանաստեղծություն ունի, որտեղ արոսենու դառնությունը համեմատում է Ռուսաստանի դառը ճակատագրի հետ՝ *Рябину рубили /Зорькою. /Рябина - /Судьбина /Горькая. /Рябина - /Седыми /Спусками. /Рябина! /Судьбина /Русская.*

սինքն՝ անգամ բառարանային համարժեքն ունենալու պարագայում բնագրի մշակութային ինֆորմացիայի մի մասը դուրս է մնում, քանի որ մեր պատկերացումների մեջ չկա *արոսենու կարմիր պտուղներ-խարույկի կարմիր լեզվակներ* գուգահեռը:

Որքան տարբեր են մշակույթները, որքան քիչ են թարգմանության լեզվի կրողները ծանոթ բնագրի լեզվի մշակույթին, այնքան դժվարանում է թարգմանչի գործը: Օրինակ՝ Ջեյմս Ջոյսի ստեղծագործությունները չափազանց բարդ են անգամ լեզվակրի համար, և զարմանալի չէ, որ գոյություն ունեն նրա ստեղծագործությունների վերաբերյալ ծանոթագրությունների առանձին ստվարածավալ աշխատություններ*:

Նույնը կարելի է ասել Միխայիլ Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտան» վեպի մասին. այն բարդ, բազմաշերտ ստեղծագործություն է՝ սիմվոլիկայով, զուգորդումներով, ակնարկներով (ալլուзия): Վեպի ընթերցումը բավականին գիտելիքներ է պահանջում ռուս և համաշխարհային գրականությունից, պատմությունից, մշակույթից, Աստվածաշնչից ևն: Վեպի ռուսերեն հրատարակությունները սովորաբար ուղեկցվում են ծավալուն մեկնաբանություններով: Հերոսների անունները, տեղանունները, թվերը, գույները, առարկաները հաճախ խորհրդանշական իմաստ ունեն, այլուզիաներ են, ինչը խիստ դժվարացնում է թարգմանչի գործը¹⁹: Օրինակ՝ վեպի 2-րդ գլխում հիշատակվում է *Лысая Гора-ն*, որի վրա, ըստ վեպի, խաչվում է Հիսուսը** («*И эта казнь сейчас совершится на Лысой Горе! Имена преступников – Дисмас, Гестас, Вар-равван и Га-Ноцри*».): Իսկ սլավոնական ֆոլկլորում *Лысая гора-ն* վիուկների հավաքատեղին է²⁰: Վիուկները սլավոնական ֆոլկլորում ցերեկը սովորական կանանցից չտարբերվող արարածներ են, որոնք գիշերը կերպարանափոխվում են, հագնում սպիտակ զգեստ և ցախավեղի վրա նստած թռչում, հավաքվում *Лысая гора-ի* վրա, վնասում ընտանի կենդանիներին, երեխաներին²¹: Վեպի հերոսուհին՝ Մարգարիտան, ինչպես գիտենք, նույնպես վերածվում է վիուկի: Հայերեն թարգմանության մեջ *Лысая гора-ն* կոչվում է *Լերկ լեռ*, սակայն լեռան անվան հետ կապված մշակութային ինֆորմացիան դուրս է մնա-

* Օրինակ՝ **A. Nicholas Fargnoli, Michael Patrick Gillespie.** James Joyce A to Z: The Essential Reference to the Life and Work. Oxford University Press. 1996, 306 p., **Don Gifford,** Ulysses Annotated. University of California Press, 1989, 645 p.:

¹⁹ Այս մասին տե՛ս, օրինակ, **Галинская И. Л.** Загадки известных книг. М., 1986, **Крючков В. П.** “Еретики” в литературе: Л. Андреев, Е. Замятин, Б. Пильняк, М. Булгаков. 2003, **Гаспаров Б. М.** Из наблюдений над мотивной структурой романа М. Булгакова «Мастер и Маргарита». Даугава, 1988, № 10-12; 1989, № 1, **Зеркалов А.** Этика Михаила Булгакова. Изд. Текст, 2004:

** Աստվածաշնչից գիտենք, որ Հիսուսը խաչվել է Գողգոթայի վրա:

²⁰ Տե՛ս **Даль В. И.** О поверьях, суевериях и предрассудках русского народа. 1-я публ. 1880 (<http://www.bibliotekar.ru/dal/>) (“*Лысая гора, под Киевом, служит сборищем всех ведьм, кои тут по ночам отправляют свой шабаш*”):

²¹ Տե՛ս նույն տեղը:

ցել թարգմանությունից. այն հայ ընթերցողի համար չի կապվում վիուկների, չար ուժերի, կախարդանքի հետ: Այսինքն՝ կապը Հիսուսի խաչելության վայրի՝ Լերկ լեռան և վիուկ-Մարգարիտայի միջև վեպում հստակ ուրվագծվում է, իսկ թարգմանության մեջ այդ կապը չի երևում բնագրի և թարգմանության ընթերցողների մշակութային տարբերությունների պատճառով: Թերևս այսպիսի դեպքերում ծանոթագրությունների միջոցով հնարավոր է գոնե մասամբ լրացնել բացը, որոշ դեպքերում էլ մեկնաբանություն-հավելումներ տալ հենց տեքստում:

Այսպիսով, մասնագիտական գրականության մեջ տարբեր է կոննոտացիայի ըմբռնումը, տարբեր են սահմանումները, տեսակետները: Մի մասը կոննոտացիան նույնացնում է ասոցիացիայի հետ, մի մասը կոննոտացիան համարում է պրագմատիկ իմաստի տեսակ, մյուսների կարծիքով՝ կոննոտացիան և ասոցիացիան, կոննոտացիան և բառի խորհրդանշական իմաստը հարկ է առանձնացնել իրարից, թեև դրանք սերտորեն կապված են: Մակայն մի բանում համամիտ են բոլորը. հարակից իմաստների թարգմանությունը բարդ խնդիր է, և այստեղ ունիվերսալ լուծումներ հնարավոր չէ առաջարկել: Հոդվածում փորձել ենք կոնկրետ օրինակների քննությամբ ցույց տալ, թե համարժեք թարգմանություն անելու համար որքան կարևոր է կոննոտատիվ իմաստները հաշվի առնելը:

Բանալի բառեր – *հարանշանակություն, հարակից իմաստ, կոննոտատիվ իմաստների թարգմանություն, պոլիտկորեկտություն, մեղմասություն, խորքային գիտելիք, գուգորդում, սինվոլիկա, միջմշակութային հաղորդակցում*

АРЕВИК КАМАЛЯН – Коннотация и проблемы перевода. – Данная статья посвящена проблемам передачи коннотативных значений при переводе художественной литературы. В статье проводится сопоставительный анализ сходств и различий в коннотации в армянском и русском языках и на конкретных примерах из переводов рассматриваются те способы и средства, которые используются для передачи коннотативных значений.

Ключевые слова: *коннотация, перевод коннотативных значений, политкорректность, эвфемизм, фоновые знания, ассоциации, символика, межкультурная коммуникация*

AREVIK KAMALYAN – Connotative meaning and translation issues. – Connotation is one of the most challenging aspects in translation. This paper highlights the importance of connotative meaning in literary translation. In this paper we examine difference between connotative meanings in Armenian and Russian languages and present a number of translated examples from Armenian into Russian and vice versa.

Key words: *connotation, connotative meaning translation, political correctness, euphemism, background knowledge, associations, symbols, cross-cultural communication.*